# Կինը և քաղաքականությունը

Տնտեսական հաջողություններից դեպի քաղաքական ակտիվություն

էջ 2



Անվճար հավելված

Հատուկ թողարկում 2013

## Փաստաշար

### Գյուղատնտեսությունը կնոջ դեմքով

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների շուրջ 45%-ը, այսինքն՝ շուրջ 500 հազ. մարդ, որոնցից 57,1%-ը կանայք են:



Ընդ որում, տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում 31%-ը, իսկ կանանց զբաղվածության կառուցվածքում՝ 44%-ը: Կանանց ոչ ֆորմալ զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը 87 տոկոս է: Մի խոսքով, թվերն էլ են փաստում. կանայք գյուղատնտեսության զարգացման առավել քան կարևոր մասնակից են:

### Կանայք ՏԻՄ-երում



Հանրապետության 866 գյուղական համայնքներից ընդամենը 20-ն են ղեկավարում կանայք (2,3 %): Լոռու մարզում կին գյուղապետների թիվը ամենամեծն է, մարզի 106 գյուղական համայնքներից 7-ը կանայք են ղեկավարում: Իսկ Արագածոտնում և Վայոց ձորում ընդհանրապես կին գյուղապետ չկա:

Գյուղական ավագանիների կազմում ընդգրկված կանանց թիվը 9,5 % է: Կանանց թիվը գյուղական ավագանիների կազմում ամենամեծն է Սյունիքում՝ 20,3%, այստեղ կա երկու համայնք՝ Խդրանց և Նժդեհ, որոնց ավագանիներում միայն կանայք են, բայց ղեկավարները տղամարդիկ են: Ամենաքիչ թվով կանայք ընդգրկված են Արագածոտնի (5,1%) և Վայոց ձորի (3,1%) գյուղական ավագանիների կազմում: Վայոց ձորի միայն Գոմք համայնքում է, որ 5 ավագանու անդամներից երեքը կանայք են:

Ընդհանուր առմամբ, հանրապետության գյուղական համայնքների մոտ 42%-ում ավագանիների կազմում կանայք ընդգրկված չեն:

### Կին հերոսները



Օքսֆամը և Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) արդեն երեք տարի է ինչ մրցույթների միջոցով բացահայտում և խրախուսում են գյուղմթերքի արտադրության ոլորտի կին հերոսներին՝ դրանով իսկ փորձելով բարձրացնել կնոջ դերը գյուղատնտեսության բնագավառում:

«Երեք տարվա ընթացքում մենք բացահայտել ենք քսան կին հերոսներ, ովքեր իրենց կարևոր գործունեությամբ նպաստել են ոչ միայն իրենց ընտանիքների, այլ նաև համայնքի գյուղատնտեսության զարգացմանը: Նրանք արժանի են խրախուսման»,- ասում է ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:







Վերջին երեք տարվա ընթացքում Օքսֆամի աջակցությամբ Վայոց ձորի և Տավուշի մարզերի 18 գյուղական համայնքներում կոոպերատիվներ են հիմնվել, դրանցից վեցը կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ են, մնացածը հավասարաչափ համալրված են թե՛ կանանցով, թե՛ տղամարդկանցով: Հատկանշական է, որ բոլոր կոոպերատիվների հիմքում դրված է սոցիալական ձեռնարկության մոդելը՝ աջակցել ոչ միայն կոոպերատիվի անդամներին, այլև ողջ համայնքին:

## Կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ

# «Ավելի վստահ, ավելի գնահատված, ավելի հսպակ իրենց որոշումներում»...

**Ո՞րն է կանանց գյուղատնտեսական կոոպերատիվների հաջողության գրավականը: Այս տարվա աշնանը Վայոց ձորի Գոմք գյուղում կազմակերպված բերքահավաքի տոնը լավ առիթ էր անդրադառնալու այս հարցին: Մարզի գյուղատնտեսական ապրանքների տոնավաճառին մասնակցում էին Օքսֆամի 6 շահառու գյուղերի կանանց համայնքային կոոպերատիվների ավելի քան 100 ներկայացուցիչներ:**

Գոմքի սպառողական գյուղատնտեսական կոոպերատիվը ստեղծվել է անցյալ տարի՝ համայնքի մի խումբ ակտիվ կանանց նախաձեռնությամբ: Գործին լծվել էին աննախադեպ ոգևորությամբ, և այս տարվա սեպտեմբերի վերջին նրանք հավաքեցին իրենց ջերմոցային տնտեսության առաջին բերքը՝ լոբի ու վարունգ, որն էլ հպարտությամբ ցուցադրեցին գյուղում կազմակերպված գյուղմթերքի տոնավաճառում:

Եկամուտները, ինչպես մեզ հետ զրույցում նշեցին կոոպերատիվի անդամները, համատեղ են որոշելու, թե ինչպես տնօրինեն: Մտածում են, որ եկամտի մի մասն ուղղելու են ջերմոցի պահպանմանն ու զարգացմանը: Նաև նախատեսում են որոշակի օգնություն ցույց տալ գյուղի նորաստեղծ մանկապարտեզին: Այսինքն՝ իրագործվելու է Օքսֆամի կողմից խրախուսվող սոցիալական ձեռնարկության մոդելը, երբ նրա աջակցությամբ հիմնված ջերմոցային կամ սառնարանային տնտեսությունները ոչ միայն եկամուտ են բերում կոոպերատիվի անդամներին և նրանց ընտանիքներին, այլև օգնում են ողջ համայնքին, քանի որ եկամուտների մի մասն ուղղվում է տվյալ համայնքի սոցիալական խնդիրների լուծմանը:

Օքսֆամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը մեզ հետ զրույցում, խոսելով իրենց կողմից իրականացվող կենսապահովման ծրագրի մասին, ընդգծեց, որ ծրագրի հիմնական նպատակներից մեկը աղքատության կրճատումն է, ինչպես նաև սոցիալական արդարության վերականգնումը: Այդ սկզբունքով ծրագրի թիրախ են ընտրվել Վայոց ձորի և Տավուշի մարզերի առավել աղքատ հեռավոր, սահմանամերձ գյուղերը:

«Այդ գյուղերում աղքատությունը շատ ավելի բարձր է, և այստեղ ավելի մեծ է մեր օգնության անհրաժեշտությունը, հատկապես՝ փոքր ֆերմերներին, որոնք ո՛չ ֆինանսական ռեսուրսներ ունեն, ո՛չ էլ հասցեագրված օգնություն են ստանում կառավարության կողմից: Մեր նպատակն էր աջակցել նրանց՝ ստեղծելով կոոպերատիվի մի մոդել, որը, բնականաբար, համահունչ է նաև գյուղատնտեսության նախարարության ռազմավարությանը»,- ասաց Մ.Հակոբյանը՝ բացատրելով, որ չնայած կառավարությունը կոոպերատիվներին խթանելու քաղաքականություն է որդեգրել, այնուամենայնիվ դրա մեխանիզմները դեռևս ձևավորված չեն:

«Մեր կողմից ներդրվում է կոոպերատիվի դասական մոդելը, որը նպաստում է փոքր ֆերմերների եկամուտների ավելացմանը և միաժամանակ գյուղական համայնքների զարգացմանը: Ստեղծելով այդ մոդելը՝ մենք նպատակ չենք դնում ամբողջ Հայաստանը ծածկել կոոպերատիվներով և փոխարինել կառավարությանը: Մեր նպատակն է ցույց տալ նման մոդելի արդյունավետությունը և նպաստել, որ այն ներառվի կառավարության քաղաքականության մեջ և կիրառվի նաև այլ համայնքներում»,- պարզաբանեց նա:

Իսկ ինչպե՞ս է ծագել կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ հիմնելու միտքը: Ի պատասխան մեր այս հարցին՝ Մարգարիտա Հակոբյանը նշեց, որ գաղափարի հիմքում տղամարդկանց արտագնա աշխատանքի գործոնն է դեր խաղացել, թեպետ առաջնայինն իրենց համար կանանց ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրն է եղել:

«Սահմանամերձ գյուղերը դատարկվում են, կանայք էլ, բնականաբար, ստիպված են հետևել իրենց ամուսիններին, որոնք գնացել են: Մենք փորձում ենք միգրացիայի խնդիրը մեղմել՝ կապելով կանանց գյուղին, ներգրավելով նրանց տնտեսական գործունեության մեջ: Դրա համար որոշեցինք խառը կոոպերատիվների հետ մեկտեղ հիմնել նաև կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ: Մեր նպատակն էր ոգևորել կանանց, մեծացնել տնտեսական հնարավորությունները կանանց համար»,- ասաց նա:

## Մրցույթ մարզային լրագրողների համար

### «Կանանց իրավունքները Հայաստանում. դե յուրե և դե ֆակտո»

**Օքսֆամ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակը հայտարարում է մարզային լրագրողների աշխատանքների մրցույթ՝ «Կանանց իրավունքները Հայաստանում. դե յուրե և դե ֆակտո» խորագրով:**

Մրցույթին իրենց նյութերը կարող են ներկայացնել տպագիր, առցանց և հեռարձակող լրատվամիջոցների աշխատակիցներ, անկախ լրագրողներ, հասարակական ակտիվիստներ, հանրային թղթակիցներ, բլոգերներ:

Նյութերը պետք է տպագրված, հեռարձակված կամ առցանց տեղադրված լինեն 2013 թ. մարտի 1-ից – 2014 թ. մարտի 1-ը ժամանակահատվածում, անդրադառնան Հայաստանի մարզային քաղաքներում և գյուղական համայնքներում բնակվող կանանց քաղաքական, հասարակական և տնտեսական գործունեությանը, նրանց ձեռքբերումներին ու նվաճումներին, ինչպես նաև կանանց իրավունքների իրացման հետ կապված ցանկացած խնդիրներին ու խոչընդոտներին:



Լավագույն աշխատանքները կարժանանան մրցանակների: Մրցույթին նյութեր ներկայացնելու վերջնաժամկետը 2014 թ. մարտի 1-ն է:

Առավել մանրամասն մրցույթի մասին. https://www.facebook.com/Oxfam.Armenia

## Հաջողության բանալին

### «Մեր գյուղը դարձնենք փոքրիկ Շվեյցարիա»



«Մենք այսօր ունենք աշխատանք, կարողանում ենք տարբեր մշակաբույսեր աճեցնել, հիմնել ենք ջերմոցային տնտեսություններ, չորանոցներ և ուզում ենք մեր փոքրիկ համայնքներում աճեցնել ու արտադրել բարձրորակ բանջարային մշակաբույսեր ու մեր գյուղը դարձնել փոքրիկ Շվեյցարիա,- ասում է Վայոց ձորի մարզի Գոմք համայնքի «Վանքաձոր» կանանց գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի նախագահ Նունե Ավագյանը՝ հավելելով, որ աշխատանքի շնորհիվ շատերը մոռանում են հայրենիքը լքելու մասին:

- Մեր կոոպերատիվը 37 ֆերմեր կանանցից է բաղկացած, այն Օքսֆամի շնորհիվ ստեղծվեց ու խթան հանդիսացավ, որպեսզի կարողանանք միասին գործել, մտածել ու աշխատել…

«Վանքաձոր» կոոպերատիվի կանայք ցանել, մշակել և պահածոյացրել են ոչ ավանդական մշակաբույսերի շատ օգտակար տեսակներ՝ չերրի լոլիկ ու բրոկոլի կաղամբ: Այժմ պատրաստվում են կոոպերատիվի համար մեծացնել հողատարածքները, ավելացնել բերքի արտադրությունը և դուրս հանել շուկա, ինչպես նաև բերքից ստացված եկամտով կոոպերատիվի համար ձեռք բերել պարարտանյութեր՝ հողի բերքատվությունը բարձրացնելու համար և զբաղվել չրերի արտադրությամբ:

Այս տարի Նունե Ավագյանը նաև ընտրվել է գյուղի ավագանի.

- Կարծում եմ՝ ժամանակն է, որ կինն էլ իր խոսքն ասի: Երբ տեսնում ես բացթողումներ, խնդիրներ, պետք է բարձրաձայնես դրանց մասին, իսկ սա լավ միջոց է: Ի վերջո, տղամարդն իր հոգսերն է հասկանում, իսկ կինը՝ իրենը, և միայն միասին կարելի է արդյունքի հասնել: Համայնքը խնդիրներ ունի, բայց անհնարին, չլուծվող խնդիրներ չկան, և պետք է հասկանանք, որ մենք ենք այդ խնդիրները լուծողը:

## Մասնակցիր, որ փոխես

# Տնտեսական հաջողություններից դեպի քաղաքական ակտիվություն

**Կանանց գյուղատնտեսական կոոպերատիվների փորձը ցույց է տալիս, որ ֆերմեր կանանց շրջանում տնտեսական հաջողությունների հետ մեկտեղ ցանկություն է առաջանում մասնակցելու նաև իրենց համայնքներին վերաբերող որոշումների կայացմանը: Ավելին, նրանք այժմ ոչ միայն ակտիվ մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, այլ նաև հաղթում են: Գոմքում, օրինակ՝ ավագանու հինգ անդամից 3-ը կին են, 3-ն էլ՝ Օքսֆամի կողմից ստեղծված կոոպերատիվի անդամ:**

### «Ավագանու կազմում երկու տղամարդ կա, էն էլ դժվարությամբ ենք համոզել»



«Մեզնից առանձնապես մեծ ջանքեր չեն պահանջվել համայնքի կյանքում կարևոր տեղ զբաղեցնելու համար, մենք ստիպված չենք եղել զանազան խոչընդոտներ հաղթահարել, ապացուցել, որ մեր տեղը միայն խոհանոցը չէ»,- ասացին մեզ հետ զրույցում Գոմքի կոոպերատիվի կանայք՝ նշելով, որ իրենց գյուղը բնակեցված է Ադրբեջանից ներգաղթած փախստականներով և այն ավանդական գյուղերից չէ, որտեղ կանանց իրավունքները սահմանափակ են, իսկ կանանց ակտիվության նկատմամբ տաբուներ են դրված: Այս փաստը, ըստ նրանց, ոչ պակաս դերակատարություն է ունեցել իրենց տնտեսական և քաղաքական առաջխաղացման ճանապարհին…

«Մենք միշտ էլ ազատ ու ակտիվ ենք եղել, սա ավանդական գյուղ չէ, հավաքովի ժողովուրդ են, քաղաքի ժողովուրդ են: Շատերը փախստական են, դրա համար այստեղ այդ բանը չկա, ինչպես, օրինակ՝ կողքի գյուղում՝ սկեսուրը չի թողնում, սկեսրայրը չի թողնում, ամուսինը չի թողնում: Էն գյուղից որ գալիս են այստեղ, տեսնում են մեզ, ասում են՝ ո՞ւր են, է՜, գնում էս կանայք: Ամբողջ օրը փողոցներն ընկած ո՞ւր են գնում»,- պատմում էր կոոպերատիվի ու գյուղի ավագանու անդամ Նունե Սակունցը:

Նրա խոսքով՝ ինքը՝ որպես կին, որևէ խտրական վերաբերմունքի չի հանդիպում ո՛չ գյուղում, ո՛չ էլ ընտանիքում: Բացի այն, որ ավագանու կազմում գերակշիռ մասը կանայք են, նաև համայնքի ղեկավարը մինչև վերջերս կին է եղել: Ընդ որում, նա այդ պաշտոնում ընտրվել է երկու անգամ: Այնպես որ, կարծես իրականում կին-տղամարդ հարաբերություններն այս գյուղում հավասար հարթությունների վրա են, և իգական սեռի ներկայացուցիչ լինելը չի նույնացվում անվստահելիության ու անկարողության հետ: Ընդհակառակը՝ Գոմքում տղամարդիկ են առավել պասիվ:

«Ավագանու կազմում երկու տղամարդ կա, էն էլ մենք դժվարությամբ ենք համոզել, որ նրանք իրենց թեկնածությունն առաջադրեն: Էլի կանայք էին ուզում առաջադրվել, բայց դրսի հարցեր կան, էլի որ տղամարդիկ են լուծում: Ասենք՝ ջուրը չի գալիս գյուղի: Կանայք չեն կարող գնալ այդ խնդրով զբաղվելու»,- շարունակեց Նունե Սակունցը:

### «Պետք է դա անենք, առաջ գնանք»

Ինչ վերաբերում է հարևան գյուղերի բնակիչներից ստացվող զարմացական արձագանքներին, ապա ըստ Գոմքի ավագանու անդամի՝ լինում են նաև դեպքեր, երբ իրենց օրինակը վարակիչ է դառնում: «Նրանց մոտ տղամարդիկ կան, որ ասում են՝ ինչո՞ւ մեր կանայք էլ ակտիվ չեն, մենք էլ կուզենք, որ նրանք այսպես ակտիվ լինեն: Ուղղակի «բայց»-եր կան… Դե, մենք էլ ասում ենք՝ ձեզանից սկսեք այդ «բայց»-երի վերացումը, այսինքն՝ դուք պիտի օրինակ ծառայեք»,- կարծրատիպային կենսակերպը փոխելու համարձակության կոչ են անում Գոմքի ավագանու կին անդամները:

Վայոց ձորի մեկ այլ համայնքում՝ Ազատեկում, ստեղծված կոոպերատիվի անդամները կարծես թե պատրաստ են արձագանքելու այդ կոչին: «Այն, որ մեզանում ավագանու կին անդամներ չկան, սահմանափակում է կանանց իրավունքները: Կինն էլ պետք է մասնակցություն ունենա համայնքի կառավարման աշխատանքներին: Ծրագիր ունենք, որ առաջիկա ընտրությունների ժամանակ կոոպերատիվից ավագանու անդամներ առաջադրենք: Պետք է դա անենք, որ ավագանու անդամ լինենք, առաջ գնանք: Նաև գյուղապետի թեկնածուներ ունենք կոոպերատիվի կանանց մեջ, ինչո՞ւ չէ: Ինձ թվում է՝ խոչընդոտների կհանդիպենք այդ ճանապարհին: Բնական է: Բայց մենք կանանցով պետք է հաղթահարենք»,- ասում է Ազատեկի կոոպերատիվի անդամ Սուսան Եղոյանը:

## Նորարարություն

# «Շատ բան է փոխվել իմ եւ իմ ընտանիքի կյանքում»…

**Օքսֆամի կողմից ներդրվող սոցիալական ձեռնարկության մշակույթը նոր է Հայաստանի համար, սակայն առավել քան արդիական: Բացի համայնքային խնդիրները լուծելու հնարավորությունից, այդ մոդելը նվազեցնում է գյուղական համայնքների սոցիալական խոցելիությունը կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացած ռիսկերից, այդ թվում՝ գրեթե ամեն տարի գրանցվող կարկտահարության դեպքերի վնասներից: Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքում այդ նպատակների շրջանակում Օքսֆամի աջակցությամբ 900 քմ ընդհանուր տարածքով 3 ջերմոց են կառուցվել, նաև ջերմոցային տնտեսությանը կից ֆերմերային դպրոց է բացվել և սոցիալական ձեռնարկություն ձևավորվել:**

Կենսապահովման ծրագրի ղեկավար Վադիմ Ուզունյանի պարզաբանմամբ՝ Օքսֆամը Տավուշի մարզում աշխատում է երկար ժամանակ և ունի ռազմավարություն՝ նպաստել փոքր ֆերմերային տնտեսությունների և համայնքի տնտեսական զարգացմանը: Խնդիրներից մեկն էլ՝ սակավառեսուրս համայնքներում աղետների, գյուղատնտեսական ռիսկերի նվազեցումն է: Ջերմոցային տնտեսությունների ստեղծումն էլ այս խնդրի շրջանակներում է տեղավորվում:

«Ծրագրի ամենակարևոր առանձնահատկությունը սոցիալական ձեռնարկության գաղափարն է: Դա նշանակում է, որ ձեռնարկության շահագործումից գոյացած շահույթի մինչև 40%-ն ուղղվելու է համայնքային սոցիալական խնդիրների և կարիքների լուծմանը: Կարծում ենք՝ սա նախադեպ կդառնա այլ համայնքների համար ևս»,- ասում է Ուզունյանը:

Նա նաև նշեց, որ ջերմոցներում նոր տեխնոլոգիաներ են ներդրված.

«Ջրակաթիլային ոռոգման, ինֆրակարմիր ջեռուցման համակարգեր են տեղադրված, ինչպես նաև նոր, ավելի դիմակայուն մշակաբույսեր: Այս ամենը հնարավորություն է տալիս այլընտրանքային եկամուտ ստանալու և մեղմելու կլիմայի ազդեցությունը մշակաբույսերի վրա»:

Արված աշխատանքի արդյունքներին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալ անմիջապես Ակնաղբյուրի ջերմոցներից մեկում.



- Երկու նոր սորտի պոմիդորներ ենք աճեցնում, մեկը շատ քաղցր է, մյուսը՝ մի քիչ թթվաշ: Լավ բերք է բռնել: Ամեն օր հերթափոխով գալիս ենք, ջրում, քաղհան անում, բոլորս համաձայնվել ենք, մեր տան բոստանի գործերին զուգահեռ այստեղ էլ աշխատում, ջանք ենք թափում, որ արդյունք ունենանք,- արդեն կարմրին տվող լոլիկները ցույց տալով՝ պատմեց Ակնաղբյուր համայնքի բնակիչ Գայանե Պետրոսյանը, ում նաև «Գյուղմթերքի արտադրության ոլորտի կին հերոսներ» մրցանակաբաշխությունից էինք ճանաչում: Նա մրցույթի հաղթողներից մեկն էր: Ունի նաև իր մեծ տնտեսությունը՝ թզի, դեղձի, եգիպտացորենի այգիներ, բայց սիրով միացել է Օքսֆամ կազմակերպության նախաձեռնություններին և այսօր համայնքի սոցիալական ձեռնարկատիրության 45 անդամներից մեկն է:

Համայնքում Օքսֆամ կազմակերպության շնորհիվ հիմնված ֆերմերային դպրոցը նպատակ ունի զարգացնելու փոքր տնտեսությունների կարողությունները, այդ թվում՝ համալրելու կին ֆերմերների գիտելիքները բանջարային մշակաբույսերի արտադրության, սածիլների և սերմերի վերարտադրության, ինչպես նաև հետագա վաճառքի կազմակերպման վերաբերյալ: Կոոպերատիվի անդամների համար «Բիզնեսի աջակցման կենտրոնի» հետ համատեղ անցկացվում են դասընթացներ կառավարման և հաշվետվողականության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրվում է աջակցություն բերքի սպառման հարցում: Գյուղնախարարության բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի հետ համագործակցությամբ ստեղծվել է նաև սածիլային ջերմոց, որպեսզի համայնքն ինքը սածիլներ աճեցնի:

Նշենք նաև, որ բացի ջերմոցներ տեղադրելուց, Օքսֆամի կենսապահովման ծրագրի շրջանակներում կոոպերատիվի անդամ ֆերմերներին տրամադրվում են անտոկոս վարկեր:

Մեր զրուցակից կանայք բոլորն էլ ոգևորված էին նոր հեռանկարներով: Հայտնի է, որ Օքսֆամի բոլոր նախաձեռնությունների շրջանակում պահպանվում է գենդերային արդարության սկզբունքը, այնպես որ կանայք ու տղամարդիկ հավասար են օգտվում կազմակերպության ընձեռած տնտեսական հնարավորություններից: Բայց ջերմոցային տնտեսությունների դեպքում կանայք առաջին գծում են:

Տիկին Լարիսան Ակնաղբյուրի արդեն 48 տարվա բնակիչ է: Խոստովանում է, որ մեծ սիրով է ամեն օր գալիս ջերմոց ու մասնակցում աշխատանքներին.

- Տանը խնձորի, լավ թզի ծառեր ունեմ, բայց այստեղի աշխատանքներին էլ եմ մասնակցում: Լավ կոլեկտիվ է, մի ընտանիքի պես, հետաքրքիր է, երբ միասին, խմբով ենք աշխատանք անում,- նշում է Լարիսա Եգանյանը և հավելում, թե կցանկանար, որ սոցիալական ծրագրին հատկացված գումարն ուղղվեր համայնքային ճանապարհի, գիշերային լուսավորության կամ ոռոգման ջրի հարցերը լուծելուն:

Տիկին Էմմայի համար էլ կարևոր խնդիրը հակակարկտային կայանի տեղադրումն է.

- Եղել են դեպքեր, նաև անցյալ տարի, որ կարկուտը վնասել է մեր բերքը, իսկ հիմա, երբ ունենք այս ջերմոցը, ավելի հանգիստ ենք: Երեք ջերմոցներում աճեցնում ենք լոլիկ, վարունգ, լոբի, բիբար, բադրիջան: Օրինակ՝ մինչ այս մենք 3 հատիկ լոբու սերմով էինք շիթիլ անում, իսկ այստեղ իմացանք, որ ճիշտը 1 հատիկ սերմ ցանելն է: Շատ ավելի լավ բերք ենք ստացել:

Տիկին Ալվարդը նույնպես կոոպերատիվի ակտիվ անդամներից է.

- Հիմնադրման առաջին օրից այստեղ եմ եղել: Օքսֆամի շնորհիվ շատ բան է փոխվել իմ, իմ ընտանիքի կյանքում: Այսօր ես տանն էլ ունեմ ջերմոցներ, ցանում եմ սոխ և կանաչի՝ ձմռանը, վարունգ, պոմիդոր՝ ամռանը: Այս նոր ջերմոցներն էլ մեծ աջակցություն էին Ակնաղբյուրին...

## Փորձագետի անկյուն

# «Որոշումները կայացնում է սկեսրայրս, բայց սկեսրայրիս պուլտը սկեսրոջս գրպանում է»

**Կանայք հինգ անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում տնային աշխատանքների վրա, քան տղամարդիկ, ընդ որում, գյուղական վայրերում տնային տնտեսության և ընտանիքի խնամքի վրա ծախսվող ժամանակն ավելի շատ է, քան քաղաքում: Դրա մասին են վկայում ժամանակի գնահատման ՀՀ ԱՎԾ-ի տվյալները: Գյուղի կանայք ժամը 6-ից մինչև 23.00-ը զբաղված են լինում, բայց և այնպես նրանց 70%-ը համարում է, որ աշխատանքը ճիշտ է բաժանված ընտանիքում: Այս դիտարկումը մեր զրուցակից՝ փորձագետ Նատալյա Մարտիրոսյանն արել է՝ հիմնվելով Վայոց ձորի և Տավուշի մարզերի 6 համայնքներում անցկացված հետազոտության արդյունքների վրա: Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել տնտեսական հարաբերությունները ընտանիքում, որոշումների ընդունման, ընտանեկան բյուջեի տնօրինման գործընթացը, բացահայտել այն գործոնները, որոնք խոչընդոտում կամ նպաստում են կանանց ակտիվությանը համայնքային կյանքում:**

- Հետաքրքիր մի բան նկատեցինք. կանանց առաջխաղացումը, նրանց ակտիվությունը խրախուսելու համար շատ ավելի շահեկան են կանանց գյուղատնտեսական կոոպերատիվները: Խառը կոոպերատիվները ղեկավարում են տղամարդիկ, ու նույնիսկ այն դեպքում, երբ վարչության անդամների մեջ նաև կանայք կան, նրանք վճռորոշ ձայն չունեն, կատարում են սպասարկողի, ենթակայի դեր, այսինքն՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններում չեն գտնվում:

Իսկ կանանց կոոպերատիվներում նրանց մոտ իսկայական առաջխաղացում է նկատվում: Կանայք խոստովանում են, որ կոոպերատիվը նրանց, բացի նյութականից, տվել է թիմում աշխատելու հմտություններ, անհատական աճ: Կանանցից մեկն էլ խոստովանեց, որ կոոպերատիվի անդամ դառնալուց հետո ընտանիքում, տեսնելով, որ իր աշխատանքից ռեալ օգուտ կա ընտանեկան բյուջեի համար, իր ձայնն ավելի լսելի է դարձել:

**- Մի խոսքով, այդ կոոպերատիվներն ավելի շահեկա՞ն են կանանց համար:**

- Այդպես է ստացվում: Չնայած ֆեմինիստ չեմ, սակայն կարծում եմ՝ որպես նախնական քայլ պետք է զարգացնել ու սատարել կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումների ստեղծումը: Դա կարող է լինել կոոպերատիվ, ակումբ, համայնքային կենտրոն: Մի այսպիսի տարածված կարծիք էլ կա, որ կանայք չեն կարող իրար հետ աշխատել: Մինչդեռ կանանց գյուղատնտեսական կոոպերատիվները ցույց են տալիս հակառակը՝ կանայք համագործակցում են, միմյանց սատարում, անհրաժեշտության դեպքում՝ փոխարինում են միմյանց: Այստեղ է նաև, որ ֆորմալ լիդերից բացի, ոչ ֆորմալ լիդերներ էլ են առաջ գալիս:

**- Ի՞նչն է կանանց խանգարում հաջողության հասնելու:**

- Կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ հանգամանքներ: Օբյեկտիվն այն է, որ կանայք շատ զբաղված են առօրյա գործերով, և միշտ չէ, որ կան օժանդակ ինստիտուտներ՝ մանկապարտեզ կամ երկարօրյա, որտեղ երեխան կարող է դասերից հետո ժամանակ անցկացնել: Հաջորդ խնդիրը ֆինանսական ոչ անկախ վիճակն է: Շատ քիչ թվով կանայք ունեն իրենց անունով ձևակերպված սեփականություն: Եվ եթե բարդ իրավիճակ է ստեղծվում, կինը խոցելի է դառնում, չի կարող, օրինակ, վարկ վերցնել…

Իսկ ամենամեծ խոչընդոտը, իհարկե, հասարակական կարծիքն է, որի համար ընդունելի է մի մոդել, որ տղամարդն է դրսի կյանքը կարգավորում: Դա մի մոդել է, որ չի համապատասխանում այսօրվա իրականությանը: Կային երիտասարդ կանայք, ովքեր ասում էին, որ հասարակական կարծիքը չի նպաստում իրենց աճին, չի խրախուսում ակտիվ կնոջը:

**- Այսինքն՝ տաբունե՞ր են գործում գյուղի կանանց համար:**

- Դրանք հիմա ավելի շատ վիրտուալ բնույթի են: Նույնն է, ինչ 10 տարի առաջ մեքենա վարող կին հազվադեպ կտեսնեինք, կարծես թե տաբու էր, սակայն այսօր այդպես չէ: Տաբուները վերանում են, երբ կյանքն է թելադրում, և կան պետության ու հասարակության կողմից կանանց խրախուսող մեխանիզմներ:

Այսինքն՝ հարցը՝ կարո՞ղ է արդյոք կինը դառնալ ավագանու անդամ, այլևս չի քննարկվում, եթե կա դրական փորձ, և մարդիկ տեսնում են, որ կանայք, համայնքային կյանքին մասնակցելով, իրենց հետ են բերում սոցիալական, կրթական հարցերի լուծումներ:

**- Ի՞նչ փոփոխություններ եք նկատել ընտանիքների ներսում, որոշումներ կայացնելու առումով:**

- Այսօր շատ կանայք կատարում են տնային բանկի դերը. առօրյա ծախսերը նրանք են կարգավորում: Ջուր չեն ասում՝ կանայք աղքատության մենեջերներն են: Բայց երբ գործը հասնում է խոշոր ծախսերին կամ ներդրումներին, այստեղ տղամարդն է որոշողը, կանայք զգուշավոր են, ռիսկի չեն դիմում: Չնայած մեր հարցված կանանց մեծ մասը նշեց, որ ընտանեկան որոշումներն ընդունում են համատեղ, սակայն երբ հարցնում ես՝ իսկ եթե անհամաձայնությո՞ւն կա, ասում են՝ վերջին խոսքը տղամարդունն է:

Մի հետաքրքիր բան էլ ասվեց՝ «ճիշտ է, որոշումները կայացնում է սկեսրայրս, բայց սկեսրայրիս պուլտը սկեսրոջս գրպանում է»:

**- Ո՞րն է գյուղի կնոջ հաջողության բանալին:**

- Կանանց հաջողության բանալին տղամարդկանց ձեռքում չէ, այն հենց կանանց ձեռքում է: Ուղղակի, կարծում եմ, չպետք է առճակատման ճանապարհով գնալ: Պետք է քայլ առ քայլ հասնել, միանգամից հնարավոր չէ: Պետք է ցույց տալ, որ կինը, աշխատելով կամ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերելով, օգնում է ընտանիքին, և երեխաները դրանից չեն տուժում:

Այ, օրինակ՝ Գոմքի կոոպերատիվի նախագահի՝ Նունեի օրինակը. երեք երեխա ունի, մանկավարժ է, հրաշալի ընտանիք ունի, ակտիվ քաղաքացի է, ավագանու անդամ է, ընտանիքը, բացի շահելուց, ի՞նչ կորցրեց:

**- Ինչպե՞ս է գյուղը վերաբերվում հաջողության հասած կնոջը:**

- Կանայք ասում են՝ լավ են վերաբերվում, բացահայտ պիտակներ չեն դնում: Կանայք կան, որ կոոպերատիվի նախագահից դարձել են ավագանու անդամ: Իսկ դա ֆորմալ ստատուսի բարձրացում է: Այդ կանայք ընտրվել են համայնքի կողմից, այսինքն՝ նրանք ընդունելի են համայնքի համար…

**- Այսինքն՝ տնտեսական ակտիվությունն այս դեպքում բերում է քաղաքական ակտիվությա՞ն:**

- Այո՛, դրա օրինակները մենք ունենք, սակայն այդ դրական փորձի, հաջողված օրինակների մասին պետք է խոսել, պետք է լուսաբանել: Կարծրատիպային մոտեցումը կարելի է հաղթահարել միայն նախադեպերի, դրական օրինակների օգնությամբ: Հատկապես որ կանայք քաղաքական ասպարեզում շատ քիչ են: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ կանայք, ընդհանուր առմամբ, հետաքրքրված չեն քաղաքական կյանքին մասնակցելու: Մի մասն ասում է, որ կանանց գործը չէ: Մյուս մասը քաղաքական մասնակցություն ասելով՝ հասկանում է կուսակցություններին անդամակցելը և ավելացնում, որ չեն հավատում դրանց, քանի որ կուսակցություններն իրենց մասին հիշում են միայն այն ժամանակ, երբ ընտրություններ են լինում: Դրա հետ մեկտեղ, կանայք պասիվ են, և համայնքի մակարդակում քչերը գիտեն, թե ինչպե՛ս է ձևավորվում համայնքային բյուջեն, ինչպե՛ս է ծախսվում, ի՛նչ հնարավորություններ ունեն ավագանիները համայնքի կյանքը լավացնելու համար…

> *«Երբ դու գումար ես վաստակում և այն տուն ես տանում, դժվար է քո տեսակետը հաշվի չառնելը»:* **Ջեղեա**
>
> *«Ընդունված է այն կարծիքը, որ երբ տղամարդը կնոջ գործն է անում, ամոթ բան է, սակայն երբ հակառակն է՝ կինն է տղամարդու աշխատանքը կատարում, ամեն ինչ լավ է, այլևս ամոթ չէ»:* **Հաղթանակ**
>
> *«Տղամարդն ինչպե՞ս կիմանա, թե երեխաներն ի՛նչ շորի կարիք ունեն, կամ՝ որ տանը սուրճ չկա: Ես եմ որոշում այս բոլոր բաները, ինչո՞ւ պետք է նրանից դա հարցնեմ»:* **Ազատեկ**
>
> *«Իմ ամուսինը ավելի լավ գիտի՝ ո՛ւմ հետ զրուցի, ո՛ւմ ապրանքը վաճառի: Ինքն ունի հին կապեր և ծանոթներ: Եթե ես փորձեմ գտնել նման կապեր, մարդիկ ինձ լուրջ չեն ընդունի»:* **Գոմք**
>
> *«Եթե ուզում ես տան գործից բացի այլ աշխատանք էլ անել, ուրեմն իրոք ջանք պետք է գործադրես, քանի որ պետք է երկուսն էլ հասցնես, ու քո խնդիրն է արդեն, թե ո՞նց դա կանես»:* **Ջեղեա**
>
> *«Ես ո՛չ ժամանակ ունեմ և ո՛չ էլ հետաքրքրված եմ քաղաքականությամբ: Ամուսինս սովետական կարգերի ժամանակ կուսակցական էր, հիմա էլ տղաս է կուսակցության անդամ: Դե թող իրենք իրենց քաղաքականությամբ զբաղվեն»:* **Գոմք**

## Կանանց ձայնը



Երբ ստեղծվեց մեր ջերմատունը, ես գիշերները լուսացնում էի այնտեղ: Բույսերին խնամում էի ինչպես երեխայի, կարգավորում ջերմությունը: Իմ աճեցրած լոլիկը, վարունգը, ինչու չէ, նաև իմ պատրաստած պահածոներն արդեն շուկայում ունեն իրենց կայուն գնորդը: Կոոպերատիվում, որի անդամներից եմ նաև ես, օրեցօր զգում եմ նորի շունչը՝ մթերքի ապրանքային տեսք, իրացման նոր հնարավորություններ: Դժվարություններն արդեն հետևում են մնացել, իսկ արդյունքում ինձ զգում եմ կայացած ֆերմեր, որ դեռ անելիքներ ունի՝ ավելացնել եկամուտներս, նոր արտադրություն հիմնել, տարածել փորձս:

***Սիլվա Առաքելյան,***
*Պտղավան համայնքի ֆերմեր, գյուղի մանկապարտեզի տնօրեն*

Սկզբում, երբ ներկայիս գյուղապետն առաջարկեց իմ թեկնածությունը, իսկ կուսակցությունը պաշտպանեց, որոշ շրջանակներ, չկարողանալով իմ կատարած աշխատանքով ինձ քննադատել, ասում էին՝ թե նա կին է, գյուղապետը տղամարդու գործ է, նա ինչպե՞ս է աշխատելու: Ինչի՞, գյուղում տղամարդ չկա՞, որ պետք է գյուղապետը կին լինի, սակայն գյուղի տղամարդիկ ասացին՝ առյուծն առյուծ է, լինի էգ թե որձ:

***Նվարդ Հովհաննիսյան,***
*Երասխի գյուղապետի թեկնածու*

Ընտանիքն անպայման պետք է աջակցի կնոջը, որ նա կայանա: Եթե քաղաքականությունում, հասարակական աշխատանքում չունենաս ամուր թիկունք, աջակցություն, դու չես կարող հաղթահարել դժվարությունները ու չես կարող օգնել ուրիշներին: Ամուսինս ցանկացած հարցում ինձ աջակցում է, խորհուրդ տալիս, երբեմն ինձնից ավելի շատ ոգևորվում այս կամ այն հարցի ծրագրման ժամանակ և շատ ավելի ուրախանում, երբ այդ խնդիրը լուծում է ստանում:

***Արմինե Արսենյան,***
*Ջերմուկի ավագանու անդամ*



Որտե՞ղ պետք է պոտենցիալ ունեցող կինը ներկայանա: Պետք է միջավայր ստեղծվի, որպեսզի կինն իրեն դրսևորի, որպեսզի բնակիչներն էլ տեսնեն, որ նա լիդեր է և կարող է ավագանու անդամ դառնալ, իսկ հետո, ինչո՞ւ ոչ՝ նաև գյուղապետ: Ավագանին սկիզբն է, հանրային քննարկումներն էլ այն միջավայրն են, որոնց ընթացքում կանայք պետք է դրսևորվեն, հանրությունը նրանց տեսնի, գնահատի, և նրանք կարողանան հաստատվել:

***Ռուզաննա Ղազարյան,***
*«Աշխատանք և հայրենիք» ՀԿ նախագահ*

Նկարիչ ունեինք՝ Կոշտանց Գառնիկ էր անունը, ասում էր՝ ով խելք ունի, մեռավ, ով փող ունի, տեղափոխվեց, ով էլ անճար էր, մնաց, բայց ես չէի ասի, որ մենք անճար ենք, մենք մնացել ենք մեր հող ու ջրին, ինչ որ հայրենասիրության միտումն ա մեր սրտերում, մեր հոգիներում:

***Նինա Ադամյան,***
*«Սոսե» մայրերի ասոցիացիայի նախագահ*

## Տղամարդկանց կարծիք

# «Գյուղի կինը գիշեր-ցերեկ աշխապում ա, իսկ քաղաքի՞նը...»

**Տավուշի մարզի սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուր գյուղում արտագնա աշխատանքի շատ քչերն են մեկնում, ինչպես գյուղացիներն են ասում՝ վտանգը գյուղում մեծ է, անընդհատ կրակոցներ են հնչում, իսկ տղամարդիկ չեն կարող ընտանիքը թողնել բախտի քմահաճույքին:**

Այստեղ կինն ամուսնու հետ հավասար զինվոր է: Տղամարդկանց մեծ մասը սահմանապահ է, իսկ կանայք էլ տան հոգսերն են հոգում: Ու ամեն ինչ անում են, որ տղամարդիկ հանգիստ խղճով սահման գնան: Շրջելով գյուղամիջում՝ որոշեցինք տղամարդկանցից հետաքրքրվել, թե արդյոք մե՞ծ է գյուղի և քաղաքի կանանց միջև տարբերությունը:

«Դժվար հարց եք տալիս, չեմ կարա ասել՝ ով ա լավ, ով՝ վատ, բայց կարամ ասել, որ գյուղի կինը գիշեր-ցերեկ աշխատում ա: Առավոտվա ժամը 5-6-ին վեր ա կենում, կովը կթում, հող ա, բան մշակում ու մինչև իրիկուն հանգստություն չկա: Իսկ քաղաքի կանայք առավոտը վեր են կենում, կոֆե խմում, մի քիչ հարևաններից բամբասում, գնում գործի, գալիս, հետո դուրս գալի խանութներով ֆռում ու կյամ տուն»,- մեզ



հետ զրույցում նշեց կարմիրաղբյուրցի 60-ամյա մի տղամարդ:

30-ամյա Կարենն էլ վերջերս է ամուսնացել: Ասում է՝ ուր գնում էր աղջիկ ուզելու, չէին տալիս՝ ասելով, թե «մենք էրեխա չունենք կրակի բերան տալու»:

«Անգամ Բերդից եմ գնացել աղջիկ ուզելու, էլի չեն տվել նույն պատճառաբանությամբ, համ էլ ասում են՝ թե մեր աղջիկը գյուղ գա, ի՞նչ անի,- պատմում է Կարենն ու քմծիծաղով ավելացնում է,- իբր թե՝ Բերդը քաղաք ա, մեր գյուղն էլ գյուղ ա, հա»…

Կարենի կինը Բյուրեղավանից է, բայց գյուղի թոռ է: Կարենն ասում է. «Չեմ ուզում ոչ մեկին վիրավորել, բայց քաղաքի աղջիկը մի ձևի ա, էլի… Թեկուզ աշխատանքի պահով՝ քաղաքի աղջիկը չի գա, էստի տանջվի: Կինս արդեն հարմարվել ա էս պայմաններին, ասում ա՝ եթե ստեղ կրակոց չի լինի, ստեղաց լավ տեղ չկա, բայց ամեն մարդ չի գա էստեղ ապրի, ու մեղադրելու էլ չի»:

60-ամյա Սահակը զարմանում է, թե ինչո՞ւ ենք նման հարց տալիս իրեն: «Գյուղում, հատկապես այս գյուղում, կինը, բացի արտ ու այգի մշակելուց, իր ամուսնու հետ հավասար զինվոր է: Մենք ապրում ենք մի վայրում, որտեղ 5 տարեկան երեխայից սկսած զինվոր ա մեծանում, ուր մնաց կինը… Պարզ չի՞, որ գովելու եմ իմ գյուղի տանջված կանանց»,- ծիծաղելով ասում է Սահակը:

Այս զրույցին խառնվում է մեկ այլ տղամարդ ու շատ կտրուկ ասում. «Տո քաղաքի կնկան հիմա կարաս ասես՝ աչքիդ վերևը ունք կա՞… Ասում ա՝ իմ իրավունքն ա, իմ չգիտեմ ինչը… Իսկ մեր կանայք՝ գլուխները կախ, ամբողջ օրը աշխատում են ու իրենց մարդուն թևութիկունք են, բա՜, աղջի՛կ ջան…»:

## Առաքելություն

# Հացթուխ Մանուշը Լոնդոնից էլ է հրավեր ստացել...

**«Մանո՜ւշ, ա՜յ Մանուշ, թազա հաց ունե՞ս, զինվորի ենք ուղարկում: Վա՜յ, Մանո՛ւշ ջան, մի քանի հատ լավաշ կտա՞ս, հիվանդանոց եմ տանում, աղջիկս ասում ա՝ Մանուշ տոտայի թխած լավաշն եմ ուզում»:**
**Արմավիրի մարզի ջանֆիդեցի Մանուշ Եղիշյանին գյուղում հացթուխ Մանուշ են ասում: Նա միշտ թարմ հաց ունի տանը, ասում է՝ բացի սահմանված գումարից, հացի տերը հացթուխին 10 հատ լավաշ է տալիս, իսկ Մանուշը գրեթե ամեն օր հաց է թխում, 80-ից ավելի հաճախորդ ունի:**



«Սկզբում հաց թխել սովորեցի երեխաներիս ցամաք հացով ապահովելու համար, հետո գործս շատ սիրեցի: Ինչքան էլ հարստանամ, հաց թխելը չեմ թողնի, քանի որ հաց թխելը, ապրուստի միջոց լինելուց բացի, ինձ համար մի կարևոր խորհուրդ էլ ունի՝ շրջապատ եմ ձեռք բերում, ընկերություն, հարգանք ու պատիվ,- ասում է Մանուշն ու ավելացնում,- մեր գործը մասնագիտություն ա, ու վիրավորված եմ, որ ուսուցչի, բանակի ու հաղթանակի տոն կա, բայց հացթուխի տոն չկա: Մեր պատգամավորներն ի՞նչ են մտածում, մի հատ թող նման օրենք գրեն... Հացթուխն էլ պակաս կարևոր մարդ չի, որ հացթուխ չլինի, պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինի»:

Եթե հացթուխի տոն լինի, կատակի է տալիս Մանուշը, հնարավոր է՝ գյուղացիները համակարգիչ իրեն գնեն ու գործը թեթևացնեն:

«Հիմա մարդիկ ոտքով են գալիս մեր տուն, որ ասեն, թե որ օրն են հաց թխելու: Այդ ժամանակ կոմպյուտրով պատվերները կընդունեմ, հետները կխոսեմ: Հետո էլ եղանակը կիմանամ՝ հաց թխելու համար օրը բարենպա՞ստ է, թե՞ չէ»,- ժպտում է Մանուշը:

Հացթուխ կինն իր աշխատանքով շատ է հպարտանում, ասում է. «Կարևորը՝ ընտանիքս պահում եմ, վարկ չեմ վերցնում, խանութից պարտքով սնունդ չեմ վերցնում, թասիբ ունեմ, հո ուրիշից չե՞մ խնդրելու»... Մանուշի ընտանիքի անդամներից մշտական աշխատանք ոչ ոք չունի: Մանուշը հաց է թխում, տղան էլ ձուկ է բռնում ու վաճառում: «Մեծ տղաս չի թողնում, որ հաց թխեմ, ասում ա՝ հերիք ա, մամա, ինչքան արել ես»: Մեկ պարկ ալյուրը Մանուշը թխում է 2-3 հազար դրամով: Հաճախորդներից ոչ մեկին չի նեղացնում, գիտի՝ ում երբ է հերթագրում: Բոլորն էլ գիտեն, երբ ումից հետո է իրենց հաց թխելու հերթը:

Սովորաբար յուրաքանչյուր տուն 20 օրը մեկ անգամ է հաց թխում, ու Մանուշն արդեն հաշվարկել է՝ ում հացը երբ է վերջանում: «Ձմռանը մի քիչ դժվար է, օրը՝ կարճ, երկու մեշոկ եմ հասցնում թխել, ամառը՝ մի քիչ շատ,- ասում է Մանուշն ու դեմքին հպարտ արտահայտություն տալով ավելացնում.- հացթուխներ շատ կան գյուղում, բայց շատերն ինձ են նախընտրում, ու եթե մի օր զբաղված կամ հիվանդ եմ լինում, հաճախորդներս են հաց թխելս հետաձգում»:

Մանուշին նույնիսկ ֆիլմերում նկարահանվելու առաջարկ են արել: Առաջարկ է ստացել նաև Լոնդոնից, սակայն դեռ մտածում է, քանի որ ամուսնու և որդու հետ դեռ լեզու չի գտնում: «Գյուղում ձնն ուրիշ ա, ստեղ մարդիկ ավելի խանդոտ են: Ոչ մի տղամարդ չի թողնի, որ իր կինը միայնակ հեռու տեղ գնա»,- ասում է նա:

Մի գայթակղիչ առաջարկ էլ էր ստացել, սկզբում լավ էր զգացել, հետո երկար մտածել ու հասկացել էր, որ կմնա գյուղում, հաց կթխի ու երկիրը չի լքի:

«Իմ կլենտներից մեկը հրավիրեց Բաղրամյան՝ ցուցահանդես-վաճառքի, ընտեղ արտասահմանցիք եկան, հաց կերան, մեկ էլ մի քանի օր հետո մի հատ իմպրտնի լավ ավտո կանգնեց մեր դուռը: Տենամ՝ իրանք են, հրավիրեցին գնամ արտասահման հաց թխեմ, ասեցին՝ ավելի շատ փող կաշխատես, բայց չգնացի... Չեմ ուզում գնամ, ուզում եմ էստեղ մնամ»:

## Մարտահրավեր

# Խոպանչիների ընտանիքները. երերուն մայրիշխանություն

**«Դրա մարդը գնում ա Ռուսաստան, մի սիրած ա գտնում, էրեխա ունենում: Ընդեղ ասում են, թե՝ կնիկդ ստեղ սիրած ունի: Գալիս ա, կնգան ու չորս էրեխուն դուրս անում, թե՝ գնացե՛ք իմ տնից, էրեխեքն էլ քո պես են ըլնելու: Իրան առիթ էր պետք, էնքան որ: Ինչ իմանաս՝ սո՞ւտ ա, ճի՞շտ ա... Մինչև աչքդ չտենա, բերանդ չպիտի ասի»,- Խոր Վիրապ գյուղի ամենաքննարկվող թեման է իրենց համագյուղացի կանանցից մեկի մասին:**
**Հիմա, երբ դեռ չեն գնում դաշտում աշխատելու, համեմատաբար ժամանակ ունեն նստելու, զրուցելու: Դրանից օգտվում եմ նաև ես՝ նրանց հետ խոսելու առիթը բաց չթողնելով:**



Կանայք հիմնականում հրաժարվում են նկարվելուց կամ խոսելուց: Սակայն մի քիչ շփվելուց հետո նրանցից ամենահամարձակները համաձայնում են լուսանկարվել, սկսում անկեղծանալ:

«Օրս սկսվում է առավոտյան ժամը վեցին: Գնում եմ դաշտ՝ աշխատելու, գալիս եմ տուն ժամը իրիկվա վեցին, հետո գնում եմ տան այգում աշխատելու, հետո հետևում եմ, որ տուն-տեղը մաքուր լինի, էրեխեքը սոված չլինեն... էդպես՝ ամեն օր»,- պատմում է Թամարան:

Դաշտում 12 ժամ աշխատելու դիմաց նա օրական ստանում է 3-4 հազար դրամ: Գյուղի ծանր աշխատանքն ու գերհոգնածությունը, ամեն դեպքում, անհետևանք չեն մնացել. չնայած երիտասարդ տարիքին՝ 37 տարեկան Թամարան արդեն երկու անգամ վիրահատվել է կանացի խնդիրների պատճառով: «Ի՞նչ անեմ, տեսեք՝ գյուղի կանայք առանց այն էլ ոչ մի նորմալ առօրյա չունեն, մեր առողջությունն էլ այն չէ, օրվա մեծ մասն աշխատում ենք, բժշկի գնալն էլ ահավոր թանկ ա, վիրահատությունն էլ էնքան թանկ ա, որ երբ վիրահատվում ես ու պետք ա քեզ խնայես, փող ու ժամանակ չի լինում դրա համար: Վիրահատվեցի, հետո չկարեցա ինձ հետևեմ, նորից վիրահատվեցի: Գոնե վիրահատությունը կամ ստուգումները մեզ մի քիչ ուրիշ լինեին... Բա էդ մարդկանց չի մտահոգում՝ էս գյուղի կանայք բժշկի ո՞նց են գնում»,- սրտնեղում է Թամարան:

Թամարան երեք որդի ունի, մեկը 11 տարեկան է, երկուսն էլ զինվոր են՝ Լեռնային Ղարաբաղում ծառայող: Տան հոգսը հավասարապես կիսում է ամուսնու հետ, հակառակ դեպքում չեն կարող հասցնել: Ամուսինը՝ Սարոն, տարվա մեջ երեք ամիս է տանը լինում. արդեն յոթ տարի է, ինչ խոպան է գնում, իսկ կինը մնում է տանը՝ տնտեսությանը հետևելու: Թամարան ասում է, որ սովորել է արդեն, չի խանդում ամուսնուն:

Գրեթե ինը ամիս գյուղում մայրիշխանություն է. գյուղի տղամարդկանց մեծ մասը մեկնում է Ռուսաստան՝ աշխատելու: Գյուղում մնում են կանայք, և սկսվում է կանանց հարաբերական իշխանությունը:

Մնում են, սակայն անսասան է տղամարդու գերակա դիրքն ընտանիքում. այո՛, կնոջ ուսերին է ընկնում ընտանիքի ողջ հոգսը՝ և՛ գումար հայթայթել, և՛ երեխաներին դաստիարակել, և՛ տնտեսությունը վարել, սակայն վերջնական խոսքն ու որոշումը տղամարդունն են:

«Անարդար ա, հա՛, բայց տենց ա. խոսքը՝ տղամարդկանց, հոգսը՝ կանանց...»- ասում է Թամարան: Բայց դե իրենք չեն որոշել կարգը. «Ամեն տեղ էլ էդ ա: Ու էս կարգը չի գալիս մենակ մեզնից: Մեծամեծ մարդիկ էլ են էս օրենքով ապրում»,- ավելացնում է Սվետան:

«Մենք մեր տղամարդկանց հետ հավասար աշխատում ենք, բայց մեր հոգսն ավելի շատ ա, մենակ տունը հերիք ա»,- ասում է Սվետան: Եթե գյուղի տղամարդիկ չգնան խոպան, իրենք պարզապես սովի կմատնվեն: Հողագործությամբ զբաղվելու համար էլ մեծ ներդրումներ են հարկավոր, գումարներ:

«Երկու օրը մեկ են ջուրը տալիս, էն էլ՝ երկու ժամով: Եթե նասոս ունեն, ջուրը լցնում են, եթե չէ, ուրեմն ստիպված այստեղ-այնտեղ են գնում, ջուր կրում: Այսինքն՝ ստեղ գյուղացին ուղղակի հողագործությամբ չի կարող զբաղվել, պետք ա գնա, ինչ-որ մեկի համար աշխատի, էդ էլ կոպեկներ ա: Մնում ա՝ խոպան գնալը»,- պատմում է Սվետան:

Գյուղի աղջիկները դպրոցն ավարտելուց հետո հիմնականում ամուսնանում են, տղաները՝ ամուսնանում ու գնում խոպան: Կրթության մասին հիմնականում չեն էլ մտածում. «Տրանսպորտ նորմալ չի աշխատում, էրեխուն սովորացնելու համար փող ա պետք, էդ էլ հեշտ չի: Սկի որ կողքի գյուղ գնա, պիտի ամեն ինչ թողեմ, տանեմ-բերեմ, իրան էլ մենակ հերը չի թողնի գնա-գա: Չէ՛, չի սովորի»,- ասում է Անահիտը (անունը փոխված է): Նա հրաժարվում է լուսանկարվելուց, ասում է՝ տեսքն այն չէ, սակայն ավելի շուտ վախենում է. ամուսինը կիմանա, կբարկանա:

Դուստրը՝ 17-ամյա Մերին, ինչ-որ տեղ գնալու համար հոր թույլտվությունը պետք է ստանա: Հոր իշխանությունը փոխարինվում է ամուսնու իշխանությամբ. «Բա ոնց, հիմա որ հորը չլսեց, մարդուն ո՞նց կլսի»,- ասում են կանայք:

Կրթություն ստանալու մասին Մերին չի մտածում. սովորեց, հետո որտե՞ղ է աշխատելու: Գյուղում աշխատատեղ ու պահանջարկ չկա, ինչո՞ւ սովորի: Նա նույնպես հրաժարվում է լուսանկարվելուց:

«Մեր աղջիկները նամուսով, խելոք ամուսնանում են, լավ ընտանիքների լավ մայրեր դառնում: Լոող, խելոք, համեստ էրեխեք են, լավ հարսներ... Մենակ թե չգիտեմ՝ էդ լա՞վ ա, որ տենց ա, թե՞ մարդ մի քիչ էլ հենց իրա մասին պիտի մտածի, իրա կյանքով ապրի: Բայց սկի ժամանակ չեն ունենում, որ էդ մասին մտածեն: Մինչև մտածում են, արդեն ամուսնանում են, մարդկերքն էլ՝ խոպան: Հետո մեկ էլ տեսար՝ մարդն էկավ, տնից դուրս արեց կնգան՝ իբր թե նամուսով չես... Տեսնես՝ էն խեղճ կնիկն իրա չորս էրեխով ի՞նչ էղավ...»- բարձրաձայն մտորում է Սվետան: Հետո սկսում են քննարկել՝ արդյոք իրենց համագյուղացի կինը կարո՞ղ էր դավաճանել ամուսնուն, թե՞ ոչ...

## Թվերն են խոսում

ՀՀ ԱՎԾ տվյալներով կին գլխավորով տնային տնտեսությունների թիվը մոտ 1/3 են կազմում, ինչը զգալի չափով բացատրվում է տղամարդկանց արտագաղթով. արտագնա աշխատանքի մեկնած ամուսինները միշտ չէ, որ պահպանում են կապը Հայաստանում մնացած ընտանիքների հետ: Գյուղական վայրերում տնային տնտեսությունների 26 տոկոսն են գլխավորում կանայք, ընդ որում, այդ տնտեսությունները ոչ միայն իրենց մեկ շնչի հաշվով եկամուտներով (ամսական 22.982 դրամ) զգալի զիջում են տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների եկամուտներին (ամսական 43.020), այլև ընդհանրապես ավելի ցածր են նրանցից իրենց կենսամակարդակով:

## Հաջողության բանալին

### Berd Bears՝ Բերդի կանանց այցեքարտը



**«Դուք օգնում եք սահմանամերձ շրջանի կանանց թեթևացնելու նրանց հոգսերը». նման գրությամբ գործված արջուկներն արդեն երկու տարի է, վաճառվում են աշխարհի տարբեր երկրներում:**

Նախաձեռնությունը «Բերդի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամինն է: Berd Bears կամ «Բերդի արջեր» կազմակերպությունում այսօր 30 կին է աշխատում: Մինչև աշխատանքի անցնելը նրանք որոշակի դասընթաց են անցել և այժմ էլեկտրոնային տարբերակով վաճառում են ձեռագործ արջեր աշխարհի բազմաթիվ երկրներում:

«Բերդի արջերը» լայն տարածում ունեն հատկապես ԱՄՆ-ում, Կանադայում, Ռուսաստանում: Պատճառը ոչ միայն հայուհիների ստեղծագործ միտքն ու յուրահատուկ նախշազարդերն են, այլև այն, որ խաղալիքներն ամբողջությամբ ձեռքի աշխատանք են և պատրաստված են էկոլոգիապես մաքուր հումքից:

«Բերդի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամը ստեղծվել է 2011-ին: Կազմակերպության առաքելությունն է նպաստել Բերդի սահմանամերձ տարածաշրջանում կանանց կայացմանը: Կենտրոնի տնօրեն Անահիտ Բադալյանը մեզ հետ զրույցում շեշտում է, որ տարածաշրջանում կանանց գլխավոր խնդիրը գործազրկությունն է: Ժամանակին տարածաշրջանը հայտնի է եղել բազմաթիվ գործարաններով՝ ռելեի, ծխախոտի, պահածոյի, կարի ֆաբրիկա, գինու արտադրամաս: Այս կազմակերպություններում հիմնական աշխատուժը կազմել են կանայք՝ մոտ 80 տոկոս, սակայն խորհրդային կարգերի փլուզումից հետո գործարանները փակվեցին, կանայք մնացին անգործ, և այսօր էլ՝ 23 տարի անց, կանանց զբաղվածության հարցը չի լուծվել:

Ա. Բադալյանը շեշտում է, որ տարածաշրջանում հազարավոր ընտանիքներ ամբողջական չեն: Ամուսինը մեկնում է արտասահման, և տան ամբողջ հոգսն ընկնում է կնոջ վրա: Ցավալին այն է, որ կանայք չեն կարողանում աշխատանք գտնել, և ստեղծվում է մի իրավիճակ, երբ մի ամբողջ ընտանիք սպասում է Ռուսաստանից եկող գումարին: Իսկ եթե ամուսինը մոռանում է ընտանիքի մասին, դրսում նոր կյանք սկսում կամ չի կարողանում գումար ուղարկել, ապա ընտանիքն ամբողջությամբ հայտնվում է աղքատության ճիրաններում:



«Հետևաբար, եթե դուք ինձ հարցնեք, թե ո՞րն է մարզի կանանց խնդիրները լուծելու գլխավոր ուղին, ապա ես կասեմ՝ նախ գտնենք աշխատանք կանանց համար, ստեղծենք պայմաններ, որ նրանք դրսևորվեն և կարողանան ինքնահաստատվել»,- ասում է Անահիտ Բադալյանը՝ հավելելով, որ «Բերդի արջերը» հենց նման հնարավորություն է տվել մի քանի տասնյակ կանանց:

*Համարի վրա աշխատել են՝*
*Արմինե Գևորգյանը, Լիլիթ Քոչինյանը,*
*Աննա Զախարյանը, Մարիամ Մուղդուսյանը,*
*Հասմիկ Հարությունյանը, Տաթևիկ Նազինյանը*

OXFAM
Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ
Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com